

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹՈՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ.....	3
ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ.....	6
ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ.....	10
ԱՂԲՅՈՒՐ.....	12
ԳԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ.....	14
ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԱՌԱՎՈՏ.....	17
ՎԱՐԴԸ.....	19
ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ.....	22
ԾԻԾԵՌՆԱԿԻՆ.....	27
ՍՈՒՐԲ ՁԱՏԻԿ.....	30
ԱՌԱՍՊԵԼ ԼԱՎԱՇԻ ՄԱՍԻՆ.....	32
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՃԸ.....	36
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ.....	39
ՏԱՐՕՐԻՆԱԿ ՀԱՐՑԵՐ.....	42
ԱԶՔԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ.....	46
ՄԵԾ ԳՅՈՒՏԱՐԱՐԸ.....	49
ԲՈԼՈՐ ՀՐԱՇԱԼԻ ՍԽԱԼՆԵՐԸ.....	52
ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ.....	55
ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ.....	59
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՋԵԿՈՆ.....	62
ՀԱՅՐ ԲՈՆԱՍԻԻ ՀԵՔԻԱԹԸ.....	70
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՃՇՄԱՐՏԱԽՈՍ ՄԱՐԴԸ.....	74

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՀՈՎԻՎԸ ԵՒ ԱՐՁԵՐԸ.....	76
ՄԵՂՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	80
ԱՌԱՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՍ ԴԵՊԻ ԼՈՒՍԻՆ.....	83
ՓՈԹՈՐԻԿ.....	87
ԱՐՏԱՍՈՎՈՐ ԵՂՁԵՐՈՒՆ.....	91
ՈՒԹՈՏՆՈՒԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ .....	94
ՆԱՊԱՍՏԱԿ .....	97
ԿԵՍ ՁԻՆ .....	99
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ .....	103

# ԹՈՂՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

## *Հովհաննես Թումանյան*

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ  
Առատ ու անփույթ,  
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,  
Կեղևը՝ կապույտ:

Նրանից հետո աչքս բաց արի  
Մի փոքրիկ բնում,  
Տեսա՝ աշխարհքը հարդից է շինած,  
Ու մայրս է շինում:

Մի օր էլ, բնից գլուխս հանած,  
Նայում եմ դես-դեն,  
Տեսնեմ՝ աշխարհքը տերևից շինած,  
Մեր բունը վրեն:

Հիմի թռչում եմ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ,  
Ամեն տեղ գընում,  
Բայց թե աշխարհքը ինչի՞ց է շինած—  
Էլ չեմ հասկանում:

## Հարցեր և առաջադրանքներ

2. Դո՛ւրս գրիր անձանոթ բառերը և էլեկտրոնային բառարանի օգնությամբ բացատրի՛ր.

---

---

---

---

3. Ինչի՞ մասին է բանաստեղծությունը: Պատմի՛ր:

---

---

---

---

4. Նշի՛ր քեզ դուր եկած քառատողը և նկարի՛ր:

---

---

---

---

5. Քո կարծիքով ինչի՞ց է շինված աշխարհը: Պատմի՛ր աշխարհի մասին:

---

---

---

---



# Ամենից լավ տունը

## *Հովհաննես Թումանյան*

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ  
Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,  
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ  
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,  
Մի գորշ խրճիթում,  
Մի հին խրճիթում,  
Գետի եզերքին,  
Ծառերի տակին:

Մի օր էլ եկավ անհանգիստ տղան,  
Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.  
«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ.  
Միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,  
Էս գորշ խրճիթն է,  
Էս հին խրճիթն է,  
Գետի եզերքին,  
Ծառերի տակին:

Թո՛ղ գնամ շրջեմ աշխարհից աշխարհ,  
Ճամփորդեմ լավ-լավ տներ տեսնելու,  
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,  
Գամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու  
Էս գորշ խրճիթից,  
Էս հին խրճիթից,

Գետի եզերքին,

Ծառերի տակին»:

Ու գնաց, երկար թափառեց տրդան,

Մեծ ու հոյակապ շատ տներ տեսավ,

Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...

Ու հառաչելով ետ վերադարձավ

Էն գորշ խրճիթը,

Էն հին խրճիթը,

Գետի եզերքին,

Ծառերի տակին:

«Գտա՞ր, գավա՛կս», հարցրեց մայրը,

Ուրախ, նայելով իր տղի վրա:

«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,

Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,

Էս գորշ խրճիթն է,

Էս հին խրճիթն է,

Գետի եզերքին,

Ծառերի տակին»:

## Հարցեր և առաջադրանքներ.

1. Բնութագրի՛ր բանաստեղծության տղային, մորը:

---

---

---

---

2. Ի՞նչ երազանք ուներ տղան:

---

---

---

---

3. Նկարագրի՛ր տղայի խրճիթը:

---

---

---

---

4. Նկարագրի՛ր քո տունը: Տեսանյութ պատրաստի՛ր քո տան մասին և տեղադրի՛ր բլոգումդ:

---

---

---

---

5. Նկարի՛ր այն տունը, որտեղ կցանկանայիր ապրել:

# Մանուկն ու ջուրը

## *Հովհաննես Թումանյան*

Ամպոտ սարեն ուրախ ձենով  
Ջուր է գալիս, անցնում շենով:  
Մի թուխ մանուկ դուրս է վագել,  
Ձեռքն ու երես պաղ լվացել,  
Լվացել է ձեռքն ու երես,  
Ու դարձել է՝ խոսել էսպես.

— Դու ո՞ր սարեն կուգաս ջրի՛կ,  
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:  
— Ես էն սարեն կուգամ մթին,  
Որ հին ու նոր ձյունն է գլխին:

— Դու ո՞ր առուն կերթաս, ջրի՛կ.  
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:  
— Ես էն առուն կերթամ զվարթ,  
Ուր ափերն են շուշան ու վարդ:

— Դու ո՞ր այգին կերթաս, ջրի՛կ.  
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:  
— Ես էն այգին կերթամ դալար,  
Որ տերն է ժիր մեջն այգեպան:

## Հարցեր և առաջադրանքներ

### 1. Գտի՛ր հետևյալ բառերի

Ա. Հոմանիշները

մանուկ - \_\_\_\_\_

դպար - \_\_\_\_\_

Բ. հականիշները

ժիր - \_\_\_\_\_

պաղ - \_\_\_\_\_

### 2. Որտեղի՞ց է հոսում առվակը: Նշի՛ր այն տողերը, որտեղ դա երևում է:

---

---

---

---

---

### 3. Նկարի՛ր քո պատկերացրած առվակը:

# Աղբյուր

## *Հովհաննես Թումանյան*

Սարի լանջին, ժայռի տակ,  
Ջուր էր բխում սառնորակ  
Ու ցրվելով խոտերում  
Իզուր ճահիճ էր դառնում:  
Նրա առջև մի խոր գուշ  
Շինեց հովիվն ու անուշ  
Խաղ ասելով նա տարավ,  
Ջրեց հոտը իր ծարավ:  
Պախրեն անցավ էն սարից՝  
Շոգից հանած չոր լեզուն,  
Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,  
Ապա նայեց Աստծուն:  
Անցվորն եկավ տոթակեզ,  
Սառն աղբյուրին որ հասավ,  
Գլխարկն առավ ու չոքեց՝  
Խմեց, սիրտը հովացավ:  
Ու տվավ իր օրհնանքը  
Անցվոր մարդը էն բարի.  
«Քո շինողի օր-կյանքը Ջրի նման երկարի՛ ...»

## Հարցեր և առաջադրանքներ

1. Դու՛րս գրիր անձանոթ բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

---

---

---

---

2. Աղբյուրը որտե՞ղից էր բխում:

---

---

---

---

3. Ինչպիսի՞ն էր աղբյուրը:

---

---

---

---

4. 5. Փորձի՛ր բացատրել այս հատվածը:

«Քո շինողի օր-կյանքը Ջրի նման երկարի՛ ...»

---

---

---

---

---

# ԳԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ

## *Հովհաննես Թումանյան*

Բարի լուսի զանգեր զարկին  
Զընգզընգալեն անո՛ւշ, անո՛ւշ.  
Լուսը բացվեց մեր աշխարհքին  
Ճրղճրղալեն անո՛ւշ, անո՛ւշ:

Հովտում առուն խոխոջում է  
Գըլգըլալեն անո՛ւշ, անո՛ւշ.  
Քամին բարակ շընկշընկում է  
Զըլգըլալեն անո՛ւշ, անո՛ւշ:

Կռունկն եկավ երամ կապած  
Կըկըրոալեն անո՛ւշ, անո՛ւշ,  
Կաքավ քարին տաղ է կարդում,  
Կըկըրոալեն անո՛ւշ, անո՛ւշ:

Հարսն ու աղջիկ հանդերն էլան  
Շորորալեն անո՛ւշ, անո՛ւշ.

Ծաղկանց բուրմունքն անմահական  
Սըլսըլալեն անո՛ւշ, անո՛ւշ:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Կարդա՛ր բանաստեղծությունը և պատասխանի՛ր «ի՞նչը, ի՞նչ էր անում» հարցին:

---

---

---

---

---

---

---

2. Այս բառերն ինչպիսի՞ն կարող են լինել, գրի՛ր:

Առավոտ, զանգ, քամի, առու, ծաղիկ, կռունկ, աղջիկ, հարս

---

---

---

---

---

---

---

3. Լրացրո՛ւ աղյուսակը իմաստով իրար մոտ բառերով:

Առավոտ

լույս

քամի

հանդ

անուշ

տաղ

կարդալ

4. Իմաստով հակառակ բառերը գտի՛ր և գույգեր կազմի՛ր:

բարի

բարակ

աղջիկ

կոպիտ

Լույս

Տիար հոտ

հաստ

չար

անուշ

գիշեր

բուրմունք

մութ

առավոտ

տղա

# ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ԱՌԱՎՈՏ

## *Հովհաննես Թումանյան*

Համբարձումն եկավ, ծաղկունքը ավան

Զուգել են հանդեր նախշուն գորգերով:

Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան

Վիճակ հանելու աշխույժ երգերով:

-Համբարձում յա՛յլա,

Յայլա՛ ջան, յա՛յլա,

Սև սարեր, յա՛յլա,

Յայլա՛ ջան, յա՛յլա:

Երգ ու բույր խառնած,

Թն-թնի բրնած

Զուգում են լեռներ,

Ծաղիկ են քաղում,

Ծաղկի հետ խաղում,

Ինչպես թիթեռներ:

-Համբարձում յա՛յլա,

Յայլա՛ ջան, յա՛յլա,

Լավ օրեր, յա՛յլա,

Յայլա՛ ջան, յա՛յլա:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Կարդա՛ր բանաստեղծությունը, փորձի՛ր պատմել՝ ինչպե՞ս են նշում Համբարձման ծեսը:

2. Տեղեկություններ դուրս գրի՛ր համացանցից. ե՞րբ ենք նշում Համբարձման ծեսը:

---

---

---

---

3. Գարնանը նշվող էլ ի՞նչ ծեսեր ու տոներ գիտես, գրի՛ր:

---

---

---

---

---

# Վարդը

*Վ. Գյոթե*

*Թարգմանությունը՝ Հ. Թումանյանի*

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,

Տեսավ մի վարդ դաշտի միջին.

Վարդը տեսավ, ուրախացավ,

Մոտիկ վազեց սիրուն վարդին.

Սիրուն վարդին, կարմիր վարդին,

Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասավ.— Քեզ կպոկեմ,

Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին:

Վարդը ասավ.— Տե՛ս, կծակեմ,

Որ չմոռնաս փշոտ վարդին.

Փշոտ վարդին, կարմիր վարդին,

Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տղան պոկեց,

Պոկեց վարդը դաշտի միջին.

Փուշը նրա ձեռքը ծակեց,

Բայց էլ չօգնեց քնքուշ վարդին.

Քնքուշ վարդին, կարմիր վարդին,

Կարմիր վարդը դաշտի միջին:

## Հարցեր և առաջադրանքներ

### 1. Շարունակի՛ր պատմել բանաստեղծությունը:

Փոքրիկ տղան դաշտում մի վարդ տեսավ ու շատ ուրախացավ:

---

---

---

---

---

---

---

### 2. Ինչպիսի՞ն է վարդը այս բանաստեղծության մեջ.

ա. \_\_\_\_\_ վարդ

բ. \_\_\_\_\_ վարդ

գ. \_\_\_\_\_ վարդ

դ. \_\_\_\_\_ վարդ

### 3. Գրի՛ր ու նկարիր քեզ դուր եկած հատվածը:

---

---

---

---

4. Ի՞նչ գույն կընտրես ամբողջ բանաստեղծության համար: Ինչո՞ւ:

---

---

---

---

---

5. Հորինի՛ր:

ա. Վարդերն ինչո՞ւ փշեր ունեն:

---

---

---

բ. Փշերն ինչո՞ւ վարդեր ունեն:

---

---

---

# ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

## *Հովհաննես Թումանյան*

### I

Ժամանակով Կատուն ճոն էր,  
Շունն էլ գլխին գդակ չուներ,  
Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի,  
Ճանկել էր մի գառան մորթի:

Եկավ մի օր, ձմեռվան մտին,  
Կատվի կուշտը տարավ մորթին:

— Բարի՛ աջողում, ուստա Փիսո,  
Գլուխս մրսեց, ի սեր աստծո,  
Ա՛ն էս մորթին ու ինձ համար

Մի գդակ կարի գլխիս հարմար:  
Վարձիդ համար միամիտ մնա՛,  
Համա-համա շատ չուշանա:

— Աչքիս վրա, քեռի Քուչի,  
Մի գդակ ա, հո մի քուրք չի.

Քու թանկագին խաթեր համար  
Ուրբաթ օրը համեցեք տար:  
Փողի մասին ավելորդ ա,  
Մեր մեջ խոսելն էլ ամոթ ա,  
Ի՛նչ մեծ բան ա, տո՛, հե՛ր օրհնած,  
Միա՛յն, միա՛յն մի գդակի վարձ:

Ուրբաթ օրը քեռի Քուչին՝  
Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին  
Թափ-թափ տալով՝ ծանր ու մեծ,  
Ուստա Կատվի շեմքում կանգնեց.  
— Ուստեն ո՞ւր ա... փափախս ո՞ւր ա...  
— Մի քիչ կացի, հրես կերևա:

## II

Ուստեն եկավ քուրքը հագին,  
Շանը տեսավ, բեղի տակին  
Իրեն-իրեն քիչ փրնթփրնթաց,  
Ու մուշտարու վրա թնդաց.  
— Ցուրտը տարա՞վ... վա՛հ, տընա՛շեն,  
Չես թող անում մի շունչ քաշեն.  
Հեշտ բան հո չի՞, հլա նոր եմ  
Ցրցամ տվել, թե որ կարեմ:  
— Դե հե՛ր օրհնած, էտե՛նց ասա,  
Էդ բարկանալդ էլ ընչի՞ս ա:  
Փող եմ տվել, վախտին կարի,  
Թե չէ՝ ասա, էգուց արի:  
Համ ասում ես, համ չես կարում,  
Համ խոսում ես, վրես գոռում,  
Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,  
Քանի, ախպեր, գնամ ու գամ...  
Ասավ Քուչին ու նեղացած  
Վերադարձավ գլուխը բաց:

### III

Մին էլ եկավ, դարձյալ չկար.  
Էս անգամը դիպան իրար.  
Էլ անպատիվ, անկարգ խոսքեր,  
Էլ հին ու նո՛ր, էլ հերն ու մե՛ր,  
Էլ գող Փիսո՛ւ, էլ քաչալ Շո՛ւն...  
  
Բանը հասավ դիվանբաշուն:  
Շունը մինչև գնաց, եկավ,  
Ուստա Կատուն կոտրն ընկավ,  
Գլուխն առավ ու մի գիշեր  
Հայդե՛, կորավ. էն կորչիլն էր...

### IV

Էն օրվանից մինչև օրս էլ  
Շունն էս բանը չի մոռացել,  
Մտքում հլա դեռ պահում ա,  
Որտեղ Կատվին պատահում ա,  
Վեր ա թռչում, վրա վազում,  
  
Իրեն մորթին ետ ա ուզում.  
Իսկ սներես Կատուն հանկարծ  
Ետ ա դառնում ու բարկացած  
Փշտացնումա. մըթամ նոր եմ  
Ցրցամ տվել, թե որ կարեմ:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Դու՛րս գրիր անձանոթ բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

---

---

---

---

2. Թվարկի՛ր բալլադի հերոսներին:

---

---

---

---

3. Ինչպիսի՞ն էր Ուստա փիսոն:

---

---

---

---

4. Խաղարկային դատարան խաղա ընկերներիդ հետ. մի խումբ թող պաշտպանի Ուստա փիսոյին, մի խումբ էլ՝ մեղադրի:

---

---

---

---

---

5. Նկարի՛ր քեզ դուր եկած հաստվածը:

---

---

---

---

---

6. Նոր ավարտ հորինի՛ր ստեղծագործության համար:

---

---

---

---

---

---

---

---

7. Մտածի՛ր նոր երկխոսություն, որտեղ Շունն ու Կատուն ընկերներ են:

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

# Ծիծեռնակին

## *Աթաբեկ Խնկոյան*

Դու կապուտակ ծովով արի,  
Թեթև, թեթև թևով արի,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան երգով, կանչով արի:  
Արի, արի, սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:  
Սևիկ - մևիկ աչիկ ունես,  
Մկրատաձև պոչիկ ունես,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով, կանչով արի:  
Արի, արի, սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:  
Ծիծեռնակով գարուն կգա,  
Առանց ծիծեռ գարուն չկա,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով, կանչով արի:  
Արի, արի, սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Նկարագրի՛ր ծիծեռնակի գալն՝ ըստ բանաստեղծության:

---

---

---

---

2. Նկարագրի՛ր այս բանաստեղծության ծիծեռնակին:

---

---

---

---

---

---

3. Ինչպե՞ս ես հասկանում.

Դու կապուտակ ծովով արի - Գարնան շնչով կանչով արի :

---

---

---

---

---

---



## Սուրբ Զատիկ

Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու սպասված տոնն է: Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների գատվելու, բաժանվելու գաղափարն է: Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների գատումը, այլև բնության գույների գատումը, բաժանումն ու տարբերակումը համընդհանուր գորշությունից, միապաղաղությունից:

## Մեծ Պահք

Մեծ Պահքի շրջանը նախորդում է Հիսուս Քրիստոսի Հարության տոնին և տևում 48 օր: Պահքի ժամանակ քրիստոնյաները պետք է հրաժարվեն կենդանական ծագում ունեցող բոլոր կերակուրներից (մսեղեն, կաթնեղեն, ձկնեղեն, ձու): Պետք է հեռու մնալ մոլորություններից (ծխախոտ, ոգելից խմիչք, որկրամոլություն, ազահություն, եսասիրություն): Հրաժարվել գանգատներից, տրտունջներից, նախանձից, հպարտությունից, վեճերից:

## Ակլատիզ

Ակլատիզ կամ Ախալոճ, Աքլատիզ, Գոգոռոզ և այլն: Մեծ Պահքի խորհրդանշան է համարվում այս տիկնիկը: Այն իրենից առարկայորեն ներկայացնում է մի սոխ՝ վրան յոթ փետուր խրած և թելերով առաստաղից կախ տված: Կարնո հայերի մեջ այն ծերունու տեսքով տիկնիկ էր, որը պատրաստվում էր տղամարդու հագուստով, փարթամ ու սպիտակ բեղ ու մորուքով, միոտանի, որի ծայրին խրվում էր սոխը յոթ փետուրներով, պարզած թևերով, որոնցից քարեր էին կախում:



## Առասպել լավաշի մասին

Ըստ առասպելի, երբ Գեղամի թոռ Արամը պատերազմում էր Ասորեստանի հզոր թագավոր Նաբուգոդոնոսորի հետ, Արամը հանկարծ գերի է ընկնում Ասորեստանի թագավորին: Եվ Նաբուգոդոնոսորը հրամայում է, որ Արամը պետք է 10 օր հաց չուտի, իսկ 11-րդ օրը նրանք պետք է աղեղնամարտի բռնվեին իրար հետ: Արքան խոստանում է քաղ թողնել Արամին, եթե նա կարողանա հաղթել իրեն: Ամբողջ գիշեր մտորումների մեջ լինելուց հետո, Արամը Նաբուգոդոնոսորին խնդրում է, որ հայկական զորքից իր համար մի վահան բերեն: Արքան չի մերժում նրա խնդրանքը և սուրհանդակ է ուղարկում հայկական զորքի մոտ: Հայկական զորքը, գուշակելով, թե ինչ է ցանկանում իրենց արքան, վահանի կաղապարի տակ լավաշ են թաքցնում: Սակայն սուրհանդակները գլխի չեն ընկնում, որ վահանի տակ հնարավոր է հաց թաքցնել: Երբ վահանը հասցնում են Արամին, նա ասում է, որ այն այդքան էլ հարմար չէ և իրեն ուրիշ վահան է անհրաժեշտ: Եվ այսպես 10 օր շարունակ սուրհանդակները մեկ վահան և մեկ լավաշ են բերում Արամին: 11-րդ օրն Արամը և Նաբուգոդոնոսորը դուրս են գալիս մենամարտելու: Ասորեստանի արքան վստահ էր, որ Արամը 10 օր հաց չուտելուց հետո ուժասպառ է եղել, և ինքը հեշտությամբ կարող է հաղթել նրան: Սակայն Արամին հաջողվում է հաղթել Նաբուգոդոնոսորին և վերադառնալ հայրենիք: Հայրենիք վերադառնալուց հետո, թագավորը հրամայում է, որ Հայաստանում բոլոր հացի տեսակները վերածվեն լավաշի:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Դիտի՛ր «Կախարդական լավաշը» մուլտֆիլմը և պատասխանի՛ր հարցերին:

Ա) Ի՞նչ խորհուրդ տվեց մայրն իր որդուն:

---

---

---

---

---

Բ) Ինչպե՞ս հանկարծ լավաշը դարձավ կախարդական:

---

---

---

---

---

2. Շարունակի՛ր առած-ասացվածքները:

Անբանը հաց ուտելիս առողջ է, աշխատելիս՝ \_\_\_\_\_:

Աշխատանքը սև է, հացը՝՝ \_\_\_\_\_:

Բերան կա հաց չկա, հաց կա՝ \_\_\_\_\_:

Ղարիբի հացը լեղի է, ջուրը՝ \_\_\_\_\_:

Առանց հացի չի լինի աշխատել, իսկ առանց գինու՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_:

**3. Այս տեսքտերի նախադասությունները խառնված են: Կարդա՛ և համարակալի՛ր դրանք: Ի՞նչ հասկացա՞ր, ի՞նչ են ուսուցանում առակները:**

**Ա.** Գետնին ընկած հացի փշուրների վրա մի-մի հրեշտակ է կանգնած, և քանի որ մի ոտքի վրա կանգնելը դժվար է ու հոգնեցուցիչ, մարդիկ պետք է հրեշտակներին օգնության շտապեն, հացը գետնից վերցնեն ու մի բարձր տեղ դնեն: Ասում են, թե հենց մի փշուր հաց է ընկնում գետնին երկնքից, մեզ համար անտեսանելի մի հրեշտակ է իջնում և մի ոտքով հացի փշուրի վրա կանգնում, որ այն ոտնատակ չընկնի, չկեղտոտվի:

**Բ.** Մի արդար ու հավատարիմ մարդ, հացը ափի մեջ առած, ուտելով ճանապարհ է գնում: Շատ է նեղվում, վշտանում, որ մեղք է գործել և, ուրիշ ճար չգտնելով, հետևյալ միջոցին է դիմում. գնում է մի քաղաք, աշխատանքի անցնում, շատ չարչարվում, քրտինք թափում ու կարողություն դիզում: Փնտրում է նա էս հացի կտորը, փնտրում, բայց այդպես էլ չի գտնում: Ինչպես է պատահում՝ ձեռից մի փշուր հաց հանկարծ գետնին է ընկնում ու կանաչ խոտերի մեջ կորչում: Վրան Աստծո տաճար է կառուցում և մեջն աղոթում, «մեղա հացիկ» ասում: Վաստակած միջոցներն առած՝ նա վերադառնում է այն հողակտորը, որտեղ կորցրել էր հացի փշուրը:

---

---

---

---

---

---

---



# Կենդանիների վեճը

## Ղազարոս Աղայան

Եզրը, կովը և շունը վիճում էին միմյանց հետ և ամեն մեկը պնդում էր, թե՛ մեր տերը ամենից շատ ինձ է սիրում:

- Իհարկե նա ինձ ամենքից շատ է սիրում,- ասում է եզրը և գիտե՞ք ինչու համար: Նրա համար, որ ես եմ նրա արորն ու տափանը քաշում, ես եմ նրա համար անտառից փայտ բերում: Նա ինձ է լծում սայլին և իր ցորենը տանում ջաղաց, այնտեղ այլուր շինում. հետո էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ այլուրը և իր տան համար առևտուր անում, երեխանց համար հագնելիք առնում: Ուրեմն, դուք ի՞նչ եք կարծում, ես որ չլինեի, նա ինչպե՞ս կարող էր ապրել:

- Այդ ճշմարիտ ես ասում,- ասաց կովը:

- Բայց մեր տերն ինձ ամենքից ավելի է սիրում, այդ նրա համար է, որ նա իմանում է, թե քեզ նման աշխատասեր ու ժրաջան եզնուկին ես եմ պահել մեծացրել: Այս մեկ: Մեկ էլ որ՝ նրա գերդաստանը իմ կաթով եմ պահում: Այն մածունն ու կարագը, այն սերն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանե սպասը, որ ամեն օր խաշտում են, ո՞ւմ տվածն է: Տեսնո՞ւմ եք ուրեմն, որ եթե ես չլինեմ, բոլորը քաղցած կկոտորվեն:

- Դու էլ ես ճշմարիտ ասում, սիրո՞ւն կովիկ,- սկսեց շունը:- Ո՞վ կարող է ուրանալ քո լավությունը: Շատ անգամ ես ինքս էլ եմ մասնակից լինում քո տված անուշ թանին: Մեր տանտիկինը ամեն խնոցի հարելիս թանիցն ինձ բաժին է տալիս: Ով որ քո լավությունն ուրանա, երկու աչքով կուրանա: Ես շատ երախտագետ եմ, ոչ ոքի լավությունը չեմ կարող ուրանալ: Բայց գիտեք ինչ կա: Դուք մի նեղանաք, որ մեր տերն ինձ ամենքից էլ շատ է սիրում. դրա համար մեծ պատճառ կա և ահա ասեմ, թե ինչ է դրա պատճառը... Եվ շունն սկսեց մեկ-մեկ հաշվել, թե ինքն ինչ ու ինչ է անում: Ասած է, շունը որ հաչել սկսի, էլ չի դադարի: Այնքան հաչեց եզան ու կովի հետ, որ տերն իմացավ, գնաց նրանց մոտ, շան

լեզվիցն ազատեց, ասելով. «Թող տուր դրանց, Բողար, դու չգիտե՞ս, որ ամենքդ էլ ինձ հարկավոր եք, ոչ մեկդ մյուսի արածը չեք կարող անել. այդ պատճառով էլ ես ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցեք միմյանց»:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Տեքստից դուրս գրի՛ր անձանոթ քառերը, բացատրի՛ր օնլայն բառարանի օգնությամբ:

---

---

---

---

2. Ինչպիսի՞ն էր կենդանիների տերը:

---

---

---

---

3. Առանձնացրո՛ւ տիրոջ խոսքը: Համամի՞տ ես նրա հետ:

---

---

---

---

---

---

4. Ո՞ր հերոսին հավանեցիր, ինչո՞ւ:

---

---

---

---

5. Կենդանիներից որևէ մեկի մասին 5-10 փաստ առանձնացրո՞ւ և հրապարակի՞ր բլոգումդ:

## Հիշողություն

### *Ղազարոս Աղայան*

Ծիծեռնակը բույն էր շինում,

Ե՛վ շինում էր , ն՛ էրգում,

Ամեն մի շուղ կպցնելիս՝

Առաջվա բույնն էր հիշում:

Մեկ անգամ էր նա բույն շինել

Եվ շատ անգամ կարկատել,

Բայց այս անգամ վերադարձին

Բույնն ավերակ էր գտել:

Այժմ նորից բույն էր շինում,

Ե՛վ շինում էր , ն՛ էրգում,

Ամեն մի շուղ կպցնելիս՝

Առաջվա բույնն էր հիշում:

Նա հիշում էր անցած տարին

Իր սնուցած ձագերին,

Որոնց ճամփին հափշտակեց

Արյունարբու թշնամին:

Բայց նա կրկին բույն էր շինում,

Ե՛վ շինում էր , ն՛ էրգում,

Ամեն մի շուղ կպցնելիս՝

Առաջվա բույնն էր հիշում:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ծիծեռնակն ի՞նչ էր անում:

---

---

---

---

---

2. Ինչպիսի՞ն էր ծիծեռնակը:

---

---

---

---

---

3. Առանձնացրո՛ւ բանաստեղծության քեզ համար ամենասիրելի քառատողն ու վերնագրի՛ր:

---

---

---

---

---

---

4. Բանաստեղծությունից դուրս գրի՛ր և սյունակներում առանձնացրո՛ւ համապատասխան հարցերին պատասխանող բառեր:

Ի՞նչ

Ի՞նչ էր անում

5. Շարունակի՛ր հորինել՝ փակագծերի հարցերը փոխարինելով համապատասխան բառերով: Չմոռանա՛ւ վերնագիր գրել:

Կար- չկար մի (ինչպի՞սի) ծիծեռնակ կար: Նա շատ էր սիրում (ի՞նչ անել):  
Մի անգամ նա որոշեց (ի՞նչ անել) և ...

---

---

---

---

---

---

---

---

---

---

# Տարօրինակ հարցեր

## *Ջաննի Ռոդարի*

Կար-չկար մի տղա, որն ամբողջ օրը սրան-նրան ձանձրացնում էր իր հարցերով: Հարցեր տալն, իհարկե, վատ բան չէ, ընդհակառակը, հարցասիրությունը գովելի է, բայց վատն այն էր, որ այդ տղայի հարցերին ոչ ոք չէր կարողանում պատասխանել:

Ասենք, գալիս էր ու հարցնում.

- Ինչո՞ւ դարակները սեղան ունեն: Մարդիկ զարմանքից աչքերը չռում էին, կամ էլ հենց այնպես պատասխանում.

- Դարակները նրա համար են, որ նրանց մեջ որևէ բան դնեն, օրինակ՝ սպասք, դանակ, պատառաքաղ և այլն:

- Ես գիտեմ՝ ինչի համար են դարակները, բայց ինչո՞ւ դարակները սեղան ունեն:

Մարդիկ **թոթվում էին** ուսերը և հեռանում:

Մի ուրիշ անգամ նա հարցնում էր.

- Ինչո՞ւ պոչը ձուկ ունի:

Կամ թե՛

- Ինչո՞ւ բեղերը կատու ունեն: Տղան մեծանում էր, բայց շարունակում էր ինչուիկ մնալ, և այն էլ՝ ոչ թե սովորական, այլ՝ թարս ինչուիկ: Մեծանալուց հետո էլ նա դիմում էր բոլորին **զանազան** հարցերով: Պարզ է, որ ոչ ոք չէր կարող պատասխանել նրա հարցերին: Բոլորովին հուսահատվելով՝ թարս ինչուիկը տեղափոխվեց մի սարի գագաթ, իր համար **խրճիթ** շինեց և այնտեղ հնարում էր նոր-նոր հարցեր: Հնարում էր, գրում տետրի մեջ, իսկ հետո շատ էր չարչարվում, որ գտնի դրանց պատասխանները: Ամբողջ կյանքում նա այդպես էլ երբեք չգտավ

իր հարցերի պատասխանները: Եվ ինչպե՞ս գտներ, եթե նրա տետրում գրված էր. «Ինչո՞ւ սովերը բարդի ունի: Ինչո՞ւ ամպերը նամակ չեն գրում: Ինչո՞ւ նամականիշները գարեջուր չեն խմում»: Աստիճանաբար նրա մորուքն աճեց, մի երկա՛ր մորուք դարձավ: Հարցասերը չէր էլ մտածում այն սափրել. դրա փոխարեն նա նոր հարց էր հորինում. «Ինչո՞ւ մորուքը դեմք ունի»:

Երբ նա մահացավ, մի գիտնական ուսումնասիրեց նրա կյանքը և զարմանալի հայտնագործություն կատարեց. պարզվեց, որ այդ ինչուիկը սովոր էր գուլպաները թարսերես հագնել և այդպես էլ հագնում էր իր ողջ կյանքում: Հենց այդ պատճառով էլ մինչև վերջ չսովորեց ճիշտ հարցեր տալ: Հապա նայիր քո գուլպաներին, ճի՞շտ ես հագել:

## **Հարցեր և առաջադրանքներ**

- 1. Նշված բառերն առանձնացրո՛ւ և բացատրական բառարանի օգնությամբ բացատրի՛ր:**

---

---

---

---

---

- 2. Քո կարծիքով ինչո՞ւ էր Ինչուիկը տարօրինակ հարցեր տալիս:**

---

---

---

---

---

3. 3. Քեզ համար ի՞նչն է ձանձրալի:

---

---

---

---

---

4. Փորձի՛ր պատասխանել Ինչուիկի հորինած հարցերին: ա. - Ինչո՞ւ դարակները սեղան ունեն:

- բ. - Ինչո՞ւ ձուկը պոչ ունի:
- գ. - Ինչո՞ւ բեղերը կատու ունեն:
- դ. - Ինչո՞ւ ամպերը նամակ չեն գրում:
- ե. - Ինչո՞ւ մորուքը դեմք ունի:

---

---

---

---

---

---

---

---

5. Տեքստից դուրս գրի՛ր բարդ բառեր և օգտագործելով նրա մասերը՝ նոր բառեր կազմի՛ր:

---

---

---

---

---

6. Դուրս գրի՛ր ինչպիսի՞ հարցին պատասխանող բառերը:

---

---

---

---

---

---

7. Առանձնացրո՛ւ ի՞նչ հարցին պատասխանող բառեր և բառակապակցություններ կազմի՛ր:

Օրինակ՝ կատու – սև կատու

---

---

---

---

---

---

---

---

# Աչքերի գանգատը

## *Ջաննի Ռոդարի*

Գիտե՞ք, որ աչքերն էլ են գանգատվում: Չե՞ք հավատում: Մի անգամ իմ բախտը բերեց, ես կարողացա լսել, թե ինչպես են նրանք բողոքում:

- Ոչ ոք չգիտի, - տրտնջում էին նրանք, - թե ի՞նչ մեղք ենք մենք, խեղճ ենք մենք: Արդեն մի քանի դար է՝ մեր կյանքն անտանելի է: Մենք միշտ տեսնում էինք, որ Արեգակը պտտվում է Երկրի շուրջը: Բայց հայտնվեցին Կոպերնիկոսն ու Գալիլեյը և ապացուցեցին, որ ես 8 սխալվում եմ, ամեն ինչ հակառակն է՝ Երկիրն է պտտվում Արեգակի շուրջը: Նայում էինք ջրի մեջ և տեսնում, որ նա մաքուր է ու թափանցիկ: Բայց հայտնվեց մի հոլանդացի Լևենգուկ, մանրադիտակ ստեղծեց և պարզվեց, որ մի կաթիլ ջրում ավելի շատ կենդանի էակ կա, քան ամենամեծ գազանանոցում: Հիմա էլ, տե՛ս, գիշերը նայում ենք երկնքին, ա՛յ այնտեղ՝ վերև: Երկինքը սև է, ինչպես կասկածներն են լինում: Ամեն ինչ մեզ համար պարզ է, ախր մենք հրաշալի ենք տեսնում: Բայց դուրս է գալիս, որ մենք էլի սխալվում ենք: Մեզ մոտեցնում են աստղադիտակին, որն ուղղված է դեպի երկինք: Դե երկինք է էլի՝ իր լուսնով, աստղերով: Ու հանկարծ մենք տեսնում ենք, որ այնտեղ միլիոնավոր աստղեր կան: Այնպես որ՝ հիմա ուզենք թե չուզենք, ապացուցված է, որ մենք ամեն ինչ սխալ ենք տեսնում: Երևի լավ կլինի, որ մենք անցնենք թոշակի:

- Կեցցե՛ք: Բայց առանց աչքերի ո՞վ է դիտելու մանրադիտակներով, աստղացույցներով:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր անհասկանալի բառերը, բացատրի՛ր բառարանի օգնությամբ:

---

---

---

---

---

2. Քո կարծիքով՝ քո աչքերն ինչի՞ց կբողոքեն:

---

---

---

---

---

3. Իսկ ի՞նչն է ամենագեղեցիկ բանը, որ երբևէ տեսել են քո աչքերը:

---

---

---

---

---

4. Աչքերիդ անունից քո մեկ օրվա մասին պատմի՛ր:

---

---

---

---

---



# Մեծ գյուտարարը

## *Ջաննի Ռոդարի*

Ժամանակին մի երիտասարդ էր ապրում: Նա երագում էր մեծ գիտնական դառնալ: Գիշեր-ցերեկ սովորում էր ու մի օր վերջապես ինքն իրեն ասաց.

- Ես շատ բան եմ սովորել, գիտնական եմ դարձել և հիմա բոլորին ցույց կտամ, թե ինչեր կարող եմ անել:

Միանգամից անցավ փորձեր անելուն: Նա հայտնաբերեց պանրի անցքերը: Բայց հետո իմացավ, որ դրանք վաղուց հայտնաբերված են: Ի՛նչ պիտի աներ, շարունակեց սովորել: Սովորում էր առավոտից իրիկուն, իրիկունից առավոտ, երկար ամիսներ: Մի օր վերջապես ինքն իրեն ասաց.

- Ավարտելու ժամանակն է, ես շատ բան եմ սովորել, գիտնական եմ դարձել և հիմա բոլորին ցույց կտամ, թե ինչեր կարող եմ անել: Նա անձրևանոցի վրայի անցքերն էր հայտնաբերել, և բոլորը մի լավ ծիծաղեցին իր վրա: Գիտնականն էլի չհուսահատվեց, նորից սկսեց գրքեր կարդալ, փորձեր անել: Ու մի օր վերջապես ինքն իրեն ասաց.

- Ըհր՛, հիմա ես համոզված եմ, որ չեմ սխալվում: Հիմա ես իսկական գիտնական եմ:

Բայց, արի ու տես, որ այս անգամ էլ սխալվեց: Նա նավերը ջրաներկով ներկեց. շա՛տ թանկ նստեց: Դա դեռ ոչինչ, ծովի ջրի գույնն էլ փոխվեց:

- Մեկ է՝ ես կդառնամ մեծ գիտնական,- որոշեց գյուտարարը, չնայած մազերն արդեն 9 սպիտակել էին:

Նա նորից գրքերը ձեռքն առավ և այնքան պարապեց, որ իսկապես գիտնական դարձավ: Այդ ժամանակ նա կարող էր հնարել՝ ինչ ուզեր: Լուսին գնալու մի մեքենա հորինեց: Մի գնացք էլ ստեղծեց, որն ընդամենը մի բրնձահատիկով կարող էր հազարավոր կիլոմետրեր սլանալ: Կոշիկներ կարեց, որոնք երբեք չէին մաշվում ու էլի լիքը հետաքրքիր բաներ: Նա միայն մի բան չկարողացավ գտնել՝ ինչպես սովորենք երբեք չսխալվել: Երևի ոչ ոք էլ չի կարող դա գտնել:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ հայտնագործություններ արեց գիտնականը:

---

---

---

---

---

2. Իսկ դու ի՞նչ կուզեիր ստեղծել, որը հիմա չկա:

---

---

---

---

---

3. Երազանքիդ մասին պատմի՛ր:

---

---

---

---

---

4. Քսի՛ր հատկանիշ ցույց տվող բառերը:

---

---

---

---

---



# Բոլոր հրաշալի սխալները

## *Վիլյամ Մաքոյան (հատված)*

Յուլիսիա Մաքոյին և աշխարհում նրա լավագույն ընկերը՝ Լայոնել Քերտոր՝ Մեծն Լայոնելը, մտան Մաքոյիների խոհանոցը: Բոլորովին չպետք է կասկածել այս բարեկամության վրա, թեև Լայոնելը ամբողջ վեց տարով Յուլիսիայից մեծ է: Նրանք միասին էին ման գալիս և միշտ իրար հետ էին լինում, ինչպես անում են լավագույն բարեկամները՝ այսինքն հանգիստ ու անհոգ, առանց նույնիսկ իրար հետ խոսելու կարիք զգալու:

- Միսիա Մաքոյի,- ասաց Լայոնելը,- ես եկա հարցնելու՝ կարո՞ղ է Յուլիսիաը ինձ հետ հանրային գրադարան գալ: Քրոջս՝ Լիլիանի գիրքը պետք է փոխեմ:

- Շատ լավ, Լայոնել,- ասաց միսիա Մաքոյին,- բայց ինչո՞ւ դու մյուսների հետ չես, ինչո՞ւ Օգիի, Ալֆի, Շեկի և մյուս տղաների հետ չես խաղում:

- Նրանք,- սկսեց Լայոնելը և հանկարծ կանգ առավ շփոթված ու ամոթահար: Մի րոպե հետո նա նորից սկսեց:

- Նրանք ինձ վոնդեցին,- ասաց նա,- նրանք ինձ չեն սիրում, որովհետև ես հիմար եմ:

Նա նորից լռեց և նայեց իր լավագույն ընկերոջ մորը:

- Ես հիմար չեմ, չէ՞, միսիա Մաքոյի:

- Ոչ, Լայոնել, դու հիմար չես,- ասաց միսիա Մաքոյին, - դու մեր թաղի ամենալավ տղան ես: Բայց մի նեղացիր մյուս տղաներից, որովհետև նրանք նույնպես հրաշալի տղաներ են:

- Չեմ նեղանում, - ասաց Լայոնելը, - ես նրանց բոլորին էլ սիրում եմ: Սակայն ամեն անգամ, երբ խաղի ընթացքում մի փոքր սխալ եմ անում, նրանք ինձ վոնդում են, նրանք ինձ նույնիսկ հայհոյում են, միսիա Մաքոյի: Անգամ իմ ամենափոքր

սխալի համար նրանք բարկանամ են վրաս: «Բավական է, Լայոնել», ասում են նրանք: Եվ հենց որ այդպես են ասում, ես հասկանում եմ, որ իմ հեռանալու ժամանակն է: Երբեմն ես նույնիսկ հինգ բուլե չեմ դիմանում: Երբեմն ես սխալ եմ թույլ տալիս խաղի հենց սկզբից: Եվ նրանք անմիջապես ասում են. «Հերիք է, Լայոնել»: Ես նույնիսկ չեմ հասկանում, թե ինչ սխալ եմ արել, ի՞նչ պետք է անեմ: Ես ուզում եմ իմանալ իմ սխալը, բայց ոչ ոք ինձ չի բացատրում: Ամեն շաբաթ նրանք ինձ վռնդում են: Յուլիսիսը միակն է, որ չի լքում ինձ: Իմ միակ խաղընկերը նա է: Բայց մի օր նրանք պիտի գղջան: Կգա ժամանակ, երբ նրանք ինձ մոտ կգան, որ օգնեմ իրենց, այո, միսիս Մաքուլի, ես անպայման պիտի օգնեմ նրանց, և այդ ժամանակ նրանք պիտի գղջան, որ միշտ վռնդել են ինձ: Մի քիչ ջուր կտա՞ք:

- Խնդրեմ, Լայոնել,- ասաց միսիս Մաքուլին և տղային մի բաժակ ջուր տվեց, որը նա ազահորեն խմեց: Խմելիս նա այնպիսի ձայն էր հանում, ինչպես բոլոր երեխաները, երբ նրանց համար ջուրը դեռևս աշխարհի ամենալավ խմիչքն է:

Լայոնելը դարձավ ընկերոջը:

- Դու ջուր չե՞ս ուզում, Յուլիսիս,- հարցրեց նա: Յուլիսիսը գլխով արեց, և միսիս Մաքուլին մի բաժակ էլ նրան տվեց: Երբ նա խմեց ջուրը, Լայոնելն ասաց.

- Այժմ կարո՞ղ ենք հանրային գրադարան գնալ, միսիս Մաքուլի: Երկու ընկերները տնից դուրս եկան:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Քո կարծիքով ինչո՞ւ էին Յուլիսիա Մաքրլին և Լայոնել Քերտր աշխարհի լավագույն ընկերները:

---

---

---

---

2. Ի՞նչ է սխալը: Ինչպիսի՞ սխալներ են լինում:

---

---

---

---

3. Ի՞նչ էր պատրաստվում անել Լայոնել Քերտրը, որպեսզի իրեն խաղից վռնդող ու նեղացնող տղաները զղջան:

---

---

---

---

4. Ի՞նչ սխալ ես թույլ տվել, որի համար զղջացել ես:

---

---

---

# Գրադարանում

## *Վիշյամ Մարոյան (մաս առաջին)*

Երկու լավ ընկերները, Լայոնելն ու Յուլիսիսը, իրենց քայլերն ուղղեցին դեպի հանրային գրադարան: Երբ երկու տղաները մտան համեստ, բայց տպավորիչ շենքից ներս, զգացին, որ խոր լռություն էր տիրում այդտեղ: Թվում էր, որ նույնիսկ պատերը, հատակն ու սեղանները պապանձվել էին, կարծես լռությունը կլանել էր բովանդակ շենքը: Այնտեղ կային ծերունիներ, որոնք թերթ էին կարդում: Քաղաքային փիլիսոփաներ կային, միջնակարգ դպրոցի տղաներ ու աղջիկներ, որոնք պրպտումներ էին կատարում, բայց բոլորը լուռ էին, որովհետև իմաստություն էին որոնում: Բոլորն էլ գրքերի մոտ էին, բոլորն էլ ուզում էին մի բան հայտնաբերել գրքերի մեջ: Լայոնելը ոչ միայն շնջալով էր խոսում, այլև ոտքի մատների վրա էր քայլում: Նա շնջալով էր խոսում, որովհետև կարծում էր, որ պակաս հարգանք դրսևորած կլինի ոչ միայն ընթերցողների, այլև գրքերի հանդեպ: Յուլիսիսը հետևում էր նրան, նույնպես ոտքի մատների վրա քայլելով: Նրանք զննում էին գրադարանը, և յուրաքանչյուրն իր համար անթիվ գանձեր էր հայտնաբերում. Լայոնելը՝ գրքեր, իսկ Յուլիսիսը՝ մարդիկ: Լայոնելը գրքեր չէր կարդում և հանրային գրադարան չէր եկել գիրք վերցնելու համար: Նա պարզապես սիրում էր նայել դրանց: Նա իր բարեկամին ցույց տվեց մի ամբողջ շարք գրքեր և շնջաց.

- Տես, ինչքան շատ են: Ահա սրանք: Մի այստեղ նայիր: Մա կարմիր է: Այնտեղ մի հատ էլ կանաչը կա: Եվ դեռ ինչքան գրքեր կան:

Ի վերջո միսիս Գալահերը՝ ծեր գրադարանավարուհին, նկատեց երկու երեխաներին և մոտեցավ նրանց: Նա խոսեց առանց շնջալու, խոսեց բարձրաձայն, կարծես բոլորովին էլ հանրային գրադարանում չգտնվեր: Այդ մեծապես զարմացրեց Լայոնելին և ստիպեց, որ ընթերցողներից մի քանիսը գլուխները բարձրացնեն գրքերից:

- Քեզ ի՞նչ է հարկավոր, տղա,- ասաց միսիս Գալահերը Լայոնելին:

- Գրքեր,- կամացուկ փսփսաց Լայոնելը:

- Ինչպիսի՞ գրքեր,- հարցրեց գրադարանավարուհին:

- Բոլորը,- ասաց Լայոնելը:

- Բոլո՞րը, - հարցրեց գրադարանավարուհին:

- Ի՞նչ ես ուզում ասել: Մի տոմսով միայն չորս գիրք կարելի է վերցնել:

- Ես ոչ մի գիրք էլ չեմ ուզում վերցնել,- ասաց Լայոնելը:

- Հապա ի՞նչ ես ուզում,- հարցրեց գրադարանավարուհին:

- Պարզապես դիտել եմ ուզում,- ասաց Լայոնելը:

- Դիտե՞լ,- ասաց գրադարանավարուհին: - Հանրային գրադարանը դիտելու համար չի ստեղծված: Եթե կարդալ չգիտես, կարող ես դրանք թերթել, կարող ես նկարները նայել. բայց ինչո՞ւ ես ուզում միայն դրանց կազմերը տեսնել:

- Միրում եմ,- շշնջաց Լայոնելը,- չի՞ կարելի:

- Ինչո՞ւ չէ,- ասաց գրադարանավարուհին,- դրա դեմ օրենք չկա,- կինը նայեց Յուլիսիսին:

- Իսկ սա ո՞վ է,- հարցրեց նա:

- Սա Յուլիսիսն է,- ասաց Լայոնելը,— նա կարդալ չգիտի:

- Իսկ դու գիտե՞ս,- հարցրեց գրադարանավարուհին:

- Ոչ,- ասաց Լայոնելը,- բայց նա էլ չգիտի: Դրա համար էլ մենք ընկերներ ենք:

Իմ ծանոթների մեջ նա միակն է, որ չի կարող կարդալ:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Գրի՛ր այն կանոնները, որոնք հարկավոր է պահպանել գրադարանում:

---

---

---

---

2. Տղաներից յուրաքանչյուրն ի՞նչ էր որոնում գրադարանում:

---

---

---

---

3. Պատմի՛ր ծեր գրադարանավարուհու մասին:

---

---

---

---

---

4. Քո կարծիքով գրքերն ինչի՞ համար են:

---

---

---

---

---

5. Ի՞նչ ես կարծում կարդալ իմանալը կարևո՞ր է: Ինչո՞ւ է կարևոր:

---

---

---

---

---

---

---

6. Ո՞ր երեք գրքերը կառաջարկես, որ ընկերների կարդան:

---

---

---

---

---

---

---

# Գրադարանում

## Վիլյամ Մարոյան (մաս երկրորդ)

Ծեր գրադարանավարուհին մի պահ նայեց երկու ընկերներին: Հանրային գրադարանում, երկար տարիների իր աշխատանքի ընթացքում սա բոլորովին անսովոր մի դեպք էր:

- Լավ,- ասաց նա վերջապես,- գուցեն լավ է, որ դուք չեք կարող կարդալ: Ես կարող եմ կարդալ: Վերջին վաթսուն տարիներին շատ գրքեր եմ կարդացել և չեմ կարող ասել, թե ինչ-որ բան կփոխվեր, եթե կարդացած չլինեի: Դե, այժմ գնացեք և ձեր ուզածի չափ դիտեցեք գրքերը:

- Շնորհակալություն, տիկին,- ասաց Լայոնելը:

Երկու ընկերները շարժվեցին դեպի գաղտնիքի և արկածների ավելի մեծ ոլորտներ: Լայոնելը ավելի շատ գրքեր ցույց տվեց Յուլիսիսին:

- Սրանք,- ասաց նա,- և դրանք՝ վերևում եղածները, բոլորը գրքեր են, Յուլիսիս:- Նա մի պահ մտքերի մեջ ընկավ:

- Արդյոք ի՞նչ է ասվում բոլոր այդ գրքերի մեջ,- նա ցույց տվեց գրքերով լեցուն հինգ դարակ:- Հետաքրքիր է, ի՞նչ է գրված այս բոլորի մեջ,- ասաց նա:

Վերջապես նա գտավ մի գիրք, որը արտաքինից շատ գեղեցիկ էր երևում: Նրա կազմը կանաչ էր, թարմ խոտի նման:

Իսկ այս մեկը,- ասաց նա,- այս մեկը տես ինչքան գեղեցիկ է, Յուլիսիս:

Փոքր - ինչ վախենալով իր արածից, Լայոնելը այդ գիրքը հանեց դարակից, մի քիչ պահեց ձեռքում, հետո բացեց:

- Տես, Յուլիսիս,- ասաց նա,- սա գիրք է: Նայիր: Մեջը ինչ-որ բան կա ասված:- Նա ցույց տվեց տպագրված տողերը:

- Ահա «ա»...ն,- ասաց նա,- սա է «ա»-ն: Սա էլ ուրիշ տառ է, բայց չգիտեմ, թե որն է: Բոլոր տառերը տարբեր են, Յուլիսիս, բառերն էլ են տարբեր:

- Չեմ կարծում, որ ես երբևէ կարդալ կսովորեմ,- ասաց նա,- բայց այնքան եմ ուզում իմանալ, թե ինչ է ասված այս բոլոր գրքերի մեջ:

Ահա նկար է,- ասաց նա,- աղջիկ է նկարված: Տեսնո՞ւմ ես: Գեղեցիկ է, չէ՞:

- Նա թերթում էր էջերը.

- Տեսնո՞ւմ ես, էլի տառեր և բառեր, մինչև գրքի վերջը: Սա հանրային գրադարան է, Յուլիսիս,- ասաց նա,- ամենուր գրքեր են,- նա ակնածանքով նայում էր տպագիր տողերին, շարժում շուրթերը, կարծես փորձում էր կարդալ: Հետո գլուխն օրորեց: - Չես կարող իմանալ, թե ինչ է գրված գրքում, Յուլիսիս, մինչև որ կարդալ չիմանաս, իսկ ես կարդալ չգիտեմ,- ասաց նա: Կամացուկ փակեց գիրքը, դրեց տեղը, և երկու ընկերները ոտքի թաթերի վրա դուրս եկան գրադարանից: Դրսում Յուլիսիսը սկսեց ցատկոտել, որովհետև ուրախ էր: Նրան թվում էր, թե ինչ-որ բան է սովորել:

## **Հարցեր և առաջադրանքներ.**

1. Ի՞նչ ես կարծում, ինչ կլինի երբ շա՛տ գրքեր կարդաս:

---

---

---

---

2. Պատմի՛ր, թե տղաները ի՞նչ տեսան դարակից հանած գրքում:

---

---

---

---

3. Քո կարծիքով ինչո՞ւ էր Յուլիսիսը ուրախ:

---

---

---

---

4. Քո ընկերներից ո՞վ է նման Յուլիսիսին: Ինչո՞վ է նման:

---

---

---

---

---

# Ճանապարհորդ Ջեկոն

## *Մտեփան Չորյան*

Մի անգամ աշնանը ես մի ուրախ ճանապարհորդություն կատարեցի դեպի Երևան: Լենինական քաղաքից մի պառավ՝ զամբյուղը ձեռին եկավ-մտավ մեր վագոնը:

- Կարելի՞ է:

- Համեցե՛ք, մայրիկ, համեցե՛ք...

Եվ մենք չորս հոգով մի կողմ քաշվեցինք ու պառավին տեղ տվինք մեր նստարանի վրա: Պառավը նստեց, զամբյուղը դրեց ոտների տակ ու փեշերով ծածկեց խնամքով. հետո գրպանից մի գիրք հանեց, ակնոցը դրեց աչքերին ու սկսեց կարդալ: Եվ էլ ոչ մի խոսք: Չորս հոգի նստած ենք կողք կողքի, ոչ մեկս չի հարցնում ո՞վ եք, ո՞ր եք գնում, ինչպես լինում է առհասարակ:

Է՛հ, պատահում են այդպիսի մարդիկ էլ, որ խոսել չեն սիրում:

Այդպես անխոս գնում ենք մի փոքր տեղ, մեկ էլ տեսնեմ պառավի զամբյուղի մեջ ինչ-որ բան է շարժվում:

«Երևի հավ է», - մտածում եմ:

Բայց պառավն այդ շարժումից անհանգստացավ, անմիջապես ոտքով խփեց զամբյուղին եւ փեշերով ավելի ծածկեց:

Մի կարճ տարածություն նա ոտն այնպես մի քանի անգամ զարկեց զամբյուղին ու շարունակեց անխոս կարդալ:

Մի քիչ էլ գնացինք, զամբյուղից ճանկոտոց լսվեց:

Այս անգամ պառավը փեշերը ետ տարավ ու կռացավ զամբյուղի վրա եւ կամաց, շատ կամաց, հազիվ լսելի ձայնով սաստեց.

- Սո՛ւս, սո՛ւս, անպիտան:

Մեր կուպեի ճամփորդները զարմացած իրար նայեցին, իսկ ես մտածեցի, որ զամբյուղինը հավ չի, այլ երեւի կատու:

Գնացինք մի փոքր էլ, կոնդուկտորը եկավ տոմսերն ստուգելու: - Ձեր տոմսը, ձեր տոմսը,- կրկնում էր նա բարձրաձայն:

Եվ այդ ժամանակ ահա պառավի փեշերի տակից հանկարծ.

- Հա՛Ֆ-հա՛Ֆ-հա՛Ֆ...

Վագոնը լցվեց շան հաչոցով:

Ճամփորդները եկան հավաքվեցին հաչոցի վրա, իսկ պառավն, իրեն կորցրած, ոտով խփում էր զամբյուղին եւ շարունակ շշնջում.

- Ջեկո՛, Ջեկո՛, անպիտա՛ն...

Շունը բոլորովին չի լսում. հաչում է, կլանչում եւ զամբյուղը ճանկոռտում:

Բարկացած կոնդուկտորը կռացավ եւ վախվիսելով զամբյուղը բաց արավ. նապաստակի արագությամբ դուրս նետվեց մի պստիկ, կատվից էլ փոքր ճերմակ շնիկ՝ վզին կապույտ ժապավենից մի բանթ:

Դուրս նետվելով՝ նա մի ակնթարթ իր խոշոր, սև աչքերով նայեց անձանթ դեմքերին եւ, պառավին նկատելով, թռավ նրա գոգը:

- Սա ի՞նչ բան է,- ասում է կոնդուկտորը,- ձեզ ո՞վ իրավունք տվեց շանը բերել վագոն: - Ի՛նչ կա որ,- ասում է պառավը շանը գրկելով,- զամբյուղի մեջ ձեզ հո վնաս չի տալիս:

- Շունը վագոն մտցնելու իրավունք չկա,- գայրանում է կոնդուկտորը:- Եկող կայարանում կա՛մ կիջնեք, կա՛մ շանը կթողնեք:

- Վա՛յ, ես իմ Ջեկոյին չեմ թողնի: Գրկիս կպահեմ:

- Չի՛ կարելի,- կտրեց կոնդուկտորն ու անցավ մյուս ճամփորդների տոմսերն ստուգելու:

Հասանք կայարան. պառավը շփոթված սկսեց շանը փաթաթել փալասներով, երևի այդպես պահելու, որ չհեռացնեն: Բայց կոնդուկտորը շուտով վերադարձավ:

- Դե, մայրիկ, կա՛մ իջեք, կա՛մ շանը թողեք էս կայարանում: Պառավը չի համաձայնում:

- Չեմ կարող,- ասում է,- շունը թողնել: Սա տղայինս է. դրել է, որ տանեմ Երևան: Կմեռնեմ՝ չեմ թողնի:

- Դե՛ իջեք:

- Ո՛չ կիջնեմ, ո՛չ կթողնեմ...

Երկար նա իրենն էր ասում, սա՛ իրենը, մեկ էլ կոնդուկտորը նեղսրտած առաջ եկավ:

- Հասկացի՛ր, մայրիկ, էս իրավունք չունեմ վագոնում շուն թողնելու:

Այս ասելով՝ նա շանը իսկեց պառավի ձեռքից եւ կլանչեցնելով տարավ դռնից գցեց դուրս: Պառավը ճղճղաց ու վազեց կոնդուկտորի ետևից, բայց մինչեւ կերթար դեպի դուռը, գնացքը շարժվեց: Պառավը մնաց շվարած:

- Վա՛յ, հիմա էս ի՛նչ պատասխան տամ տղիս:

Ու մինչեւ մյուս կայարանը նա ձեռները խփում էր ծնկներին ու վշտացած տրորվում, հուզվում.

- Վա՛յ: Ջեկո ջան, քեզ պահեցի, որ կորցնե՛մ: Վա՛յ, Ջեկո ջան...

Այսպես հասանք մյուս կայարանը. հազիվ գնացքը կանգնել էր՝ մեկ էլ պառավի շնիկը, լեզուն հանած, վազեվազ ընկավ վագոն եւ թռավ պառավի գոգը:

Ճամփորդները զարմանքից վեր կացան:

- Ա՛, եկա՛վ, շունն եկա՛վ,- ձայն տվին իրար ու հավաքվեցին շան գլխին:

Աղմուկի վրա կոնդուկտորը նորից երևաց:

- Էդ ինչպե՞ս, որտեղի՞ց եկավ,- զարմացավ նա:

- Չե՞ք տեսնում ո՛նց է հետևում,- նկատեց մեկը,- գնացքի ետևից վազել է, էլի:

Վազե՛լ... ամենքը զարմացած էին, թե ի՛նչպես է կարողացել մի կայարանից մինչև մյուսը վազել այս պստիկ շունը, ինչպե՛ս շունչը չի կտրվել...

Բայց ինչ ասես, որ եկել էր:

Սակայն բոլորից շատ զարմացած էր պառավը, նա ուրախությունից շանը սեղմում էր կրծքին ու կրկնում.

- Ջեկո՛ ջան, Ջեկո՛...

Իսկ Ջեկոն ետին ոտներով կանգնում էր նրա գոգին, առաջին ոտները դնում նրա կրծքին եւ ուզում էր կարծես համբուրել նրա երեսը, բայց երեսին չհասնելով՝ լիզում էր ձեռները:

Բոլորս ծիծաղում էինք, ուրախանում, իսկ կոնդուկտորը նորից կպավ պառավին՝ թե՛ կա՛մ պիտի իջնես, կա՛մ շունդ կթողնեմ կայարանում...

Պառավը նորից պինդ գրկեց շանը, որ կոնդուկտորը չտանի. խնդրեց, աղաչեց, որ թողնի, փող կտա, տոմս կառնի:

Բայց կոնդուկտորը դարձյալ լսել չուզեց, ու շանը քաշեց իր կողմը:

- Ես իրավունք չունեմ վագոնը շուն թողնելու, ինձ պաշտոնից դուրս կանեն, հասկացի՛ր, պառավ, հասկացի՛ր:

Ու նորից շունը կլանչեցնելով տարավ դրեց պլատֆորմի վրա եւ ինքը բարձրանալով, վագոնի դուռը փակեց:

Այս անգամ պառավը լաց եղավ: Իսկ ես, խղճալով թե՛ պառավին եւ թե՛ շանը, գլուխս վագոնի լուսամատից հանած՝ նայում եմ տեսնեմ՝ ինչ է անելու խեղճ շնիկը այդ անձանոթ կայարանում:

Երբ գնացքը շարժվեց Ջեկոն սկզբում շշմած, պոչը ետին ոտների արանքը կոխած, նայեց շարժվող վագոններին, ապա մեկեն սկսեց վազել գնացքի կողքով:

Գնացքն արագացրեց ընթացքը, Ջեկոն նույնպես, նա վազում էր գլուխն ուսերին դրած, այնպես, ինչպես նապաստակն է վազում. ցատկելով, թռչելով... վազեց-վազեց, մեկ էլ- ըհը՝ - թռավ վերջին վագոնի սանդուղքի վրա եւ նստեց լեզուն հանած:

Ուրախությունից ուզեցի մյուս ճամփորդներին պատմեմ Ջեկոյի ճարպիկությունը եւ ցույց տամ նրա տեղը, բայց մտածելով, որ բանը կոնդուկտորի ականջը կընկնի, լռեցի: Լավ էր, որ ուրիշ ճամփորդ չէր նկատել, եւ նա մնաց այդպես մինչեւ մյուս կայարանը:

Ու երբ հասանք մյուս կայարանը, Ջեկոն նորից եկավ պառավի գոգն ընկավ:

Նորից ծիծաղ, ուրախություն: Պառավը համբուրում է Ջեկոյին ու ծիծաղում մյուսների հետ:

Եկավ կոնդուկտորն էլ, ուզեց բարկանալ, բայց իմանալով բանն ինչպես է եղել, ինքն էլ սկսեց ծիծաղել:

- Դե որ էդպես է, նորից զամբյուղը դիր, մայրիկ,- ասաց նա:- Միեւնույն է, դա արդեն սովորել է առանց տոմսի ճամփորդել:

Ջեկոն, կարծես կոնդուկտորի խոսքերը հասկանալով, ինքը թռավ-մտավ զամբյուղը: Պառավը կափարիչը վրա բերեց, նորից ոտը դրեց վրան եւ փեշերով ծածկեց:

Ջեկոն հիմա հանգիստ էր. ո՛չ շարժվում էր զամբյուղում, ոչ ճանկոռոտում այն, ո՛չ էլ հաչում: Եվ այդպես հասանք Երևան:

## Հարցեր եւ առաջադրանքներ

1. Պատմվածքից դո՛ւրս գրիր անձանոթ բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

---

---

---

---

---

2. Այս դարձվածքները փոխարինի՛ր մեկ բառով.

ձայն ծպտուն չհանել – \_\_\_\_\_

իրավունք տալ – \_\_\_\_\_

վնաս տալ – \_\_\_\_\_

3. Ո՞վ է պատմում այս պատմությունը. ճիշտ պատասխանը ընդգծի՛ր.

պառավր

ուղեկցորդը

ճանապարհորդներից մեկը

4. Ի՞նչ կպատմես շնիկի մասին:

---

---

---

---

5. Արդարացրո՛ւ տատիկին:

---

---

---

---

6. Արդարացրո՛ւ կոնդուկտորին:

---

---

---

---

7. Մեղադրի՛ր տատիկին:

---

---

---

---

8. Մեղադրի՛ր կոնդուկտորին:

---

---

---

---

9. Հորինի՛ր. «Ջեկոյի նոր արկածները»

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

# Հայր Բոնամիի հեքիաթը

## *Տրանսիական ժողովրդական հեքիաթ*

Հայր Բոնամին գիտեր-չգիտեր, ընդամենը մի հեքիաթ գիտեր: Ամեն օր նա այդ հեքիաթն էր պատմում եւ այնքան էր պատմել, որ բոլորս արդեն անգիր էինք արել: Հեքիաթը որսորդների մասին էր եւ այնքան զվարճալի էր, որ լսողը ծիծաղից թուլանում էր:

Ահա այդ հեքիաթը:

Լինում են, չեն լինում, երկու որսորդ են լինում: Օրերից մի օր, սովորականի պես, շներին առաջ են անում ու գնում որսի: Էս շներից մեկը սատկած է լինում, մյուսի բերանում էլ իսկի շունչ չի լինում: Գնում են, գնում, հասնում են մի անտառ: Էս անտառում ոչ ծառ է լինում, ոչ էլ թուփ: Հանկարծ դիմացի թփից մի նապաստակ է դուրս գալիս, կանգնում որսորդների առաջ, բայց սրանք ոչ մի նապաստակ էլ չեն տեսնում: Թր՛ըխկ, թր՛ըխկ... Կրակում են, նապաստակին սպանում, ուրախանում:

Ու շվարում կանգնում են. չգիտեն, թե ինչ անեն:

- Հասկացա՛, - բացականչում է նրանցից մեկը: - Հրե՛ն, էն դոյակը տեսնո՞ւմ եք, գնանք այնտեղ:

Գնում են: Մոտենում են թե չէ՝ տեսնում են դոյակի պատերի բոլոր քարերը դեռ ու դեն են շաղ տված. դոյակ մի ասա, մի ավերակ ասա:

Թա՛կ, թա՛կ... Թակում են դոյակի դուռը, հետն էլ գոռում. «Ա՛յ մարդ, դուռը բաց արա, մենք գիտենք, որ դու կաս, բայց հիմա այդտեղ չես»:

Դուռը բացում է մի մորուքավոր: Էս մորուքավորի մորուքը էնքան երկար է լինում, որ մինչեւ գետին էր հասնում: Բայց մորուքի մեջ ոչ մի մազ չի լինում:

- Ի՞նչ եք ցանկանում, բարի պարոններ,- հարցնում է նա:

- Մի նապաստակ ենք սպանել, ուզում ենք տապակել, բայց նապաստակ չունենք:

- Ի՛նչ եք ասում,- պատասխանում է մարդը: - Դե լավ, նե՛րս համեցեք: Ես էլ մի մեծ կաթսա ունեմ: Կաթսաս անտակ է, տակն էլ տակից պոկված է: Բայց ոչինչ, նապաստակը բերեք, կկտրատենք, կլցնենք մեջը: Մսի կտորները կթափվեն, մսաջուրը կմնա:

Այսպես, ամեն օր, հայր Բոնամին մեզ պատմում էր իր այս հեքիաթը, եւ դա շատ զվարճալի էր:

## **Հարցեր եւ առաջադրանքներ**

- 1. Հեքիաթից դուրս գրի՛ր անձանոթ բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:**

---

---

---

---

- 2. Ինչի՞ մասին էր Հայր Բոնամիի հեքիաթը:**

---

---

---

---

---

**3. Նշված բառերն ու արտահայտությունները փոխարինի՛ր ուրիշ բառերով ու արտահայտություններով:**

Հայր Բոնամին մի ծիծաղաշարժ պատմություն գիտեր:

---

Որսորդները շվարել կանգնել էին ապարանքի մոտ:

---

Նրանք թակեցին խորտակված դղյակի դուռը:

---

**4. Հայր Բոնամին կարո՞ղ ես նկարագրել:**

---

---

---

---

---

**5. Սուտլիկ որսկանն ի՞նչ կասեր, եթե լսեր հայր Բոնամի հեքիաթը:**

---

---

---

---

## 6. Հորինի՛ր.

Լինում է, բայց չի լինում ...

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

# Աշխարհի ամենաճշմարտախոս մարդը

(«Մյունխհաուզենի արկածները» գրքից)

Երկար քթով մի փոքրիկ ծերուկ, բուխարու առաջ նստած, պատմում էր իր արկածները:

Լսողները նրա երեսին ծիծաղում էին.

- Ա՛յ քեզ Մյունխհաուզեն, ա՛յ քեզ բարոն:

Բայց ծերուկը նրանց չէր էլ նայում: Նա հանդարտ շարունակում էր պատմել, թե ինչպես է թռել լուսին, ինչպես է ապրել երեքոտանի մարդկանց մեջ, թե ինչպես իրեն մի մեծ ձուկ կուլ է տվել, ինչպես է գլուխը կտրվել:

Մի անգամ ինչ-որ մի անցորդ լսեց, լսեց նրան ու հանկարծ բացականչեց. - Ա՛յդ բոլորը սուտ է: Այնպիսի բաներ չեն եղել:

Ծերուկը դեմքը խոժոռեց եւ ծանր ու մեծ պատասխանեց.

- Այն բոլոր կոմսերը, բարոնները, իշխաններն ու սուլթանները, որոնց ես պատիվ եմ ունեցել լավագույն բարեկամներ անվանել, միշտ ասում էին, որ ես աշխարհիս ամենաճշմարտախոս մարդն եմ:

Շրջապատողներն ավելի բարձր հռհռացին:

- Մյունխհաուզենը ճշմարտախոս մարդ է: Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛...

Իսկ Մյունխհաուզենը, նրանց վրա ուշադրություն չդարձնելով, շարունակում էր պատմել, թե ինչպես եղջերվի գլխին մի հրաշք-ծառ էր աճել:

- Ծա՛ռ... եղջերվի գլխի՞ն...

- Այո, բալի ծառ, իսկ ծառի վրա՝ բալ... Հյութալի, քաղցր բալ...

Այդ բոլոր պատմվածքները տպված են այստեղ, այս գրքում՝ «Մյունխհաուզենի արկածները»: Կարդացե՛ք եւ ինքներդ դատե՛ք,

աշխարհում բարոն Մյունխհաուզենից ավելի ճշմարտախոս մարդ եղե՞լ է արդյոք:

## Հարցեր եւ առաջադրանքներ

1. Նկարագրի՛ր եւ բնութագրի՛ր Մյունխհաուզենին:

---

---

---

---

---

---

---

2. Քեզ ծանոթ ո՞ր հերոսին կնամանեցնես նրան, ինչու՞ :

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

# Մեղուների հովիվը եւ արջերը

*(«Մյունիսհաուզենի արկածները» գրքից)*

*Ռուդոլֆ Էրիխ Ռասպել*

Բայց ո՛չ ուժը, ո՛չ քաջությունը սարսափելի դժբախտությունից չազատեցին ինձ:

Մի անգամ կովի ժամանակ, չնայած ես վագրի նման կովում էի, այնուամենայնիվ, գերի ընկա:

Նրանք ինձ կապեցին եւ որպէս գերի ծախեցին: Սև օրեր սկսվեցին ինձ համար:

Ճիշտ է, թէն աշխատանքս ծանր չէր, բայց տխուր եւ ձանձրալի էր. ինձ մեղուների հովիվ նշանակեցին: Ամեն առավոտ ես պետք է դուրս քշեի սուլթանի մեղուները, տանեի բացատներում արածացնելու եւ երեկոյան բերեի, փեթակների մեջ տեղավորեի:

Սկզբում գործս լավ էր, բայց մի անգամ, համրելով մեղուները, տեսա, որ մեկը պակաս է:

Գնացի փնտրելու եւ շուտով նկատեցի, որ կորած մեղվի վրա երկու ահագին արջ են հարձակվել, ուզում էին երկու կես անել եւ նրա անուշ մեղրով բերանները քաղցրացնել:

Բացի փոքրիկ արծաթե կացնից, ինձ մոտ ուրիշ զենք չկար:

Կացինս շարտեցի դեպի ազահ գազանները, որ վախեցնեմ եւ խեղճ մեղվին ազատեմ: Արջերը փախան, մեղուն ազատվեց, բայց, դժբախտաբար, իմ հզոր ձեռքերի ուժը հաշվի չառնելով, կացինն այնպիսի ուժով էի շարտել, որ թռավ լուսնի վրա:

Այո՛, լուսնի վրա: Դուք գլուխներդ թափահարում եւ ծիծաղում եք, իսկ այդ ժամանակ իմ ծիծաղը չէր գալիս: Ես սկսեցի մտածել:

Ի՞նչ անեի: Որտեղի՞ց այնպիսի երկար ելարան գտնեի, որ լուսնին հասնեի:

## Հարցեր եւ առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր անձանոթ բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

---

---

---

---

---

2. Նշի՛ր հեքիաթի ամենազվարճալի հատվածը:

---

---

---

---

---

3. Նշի՛ր հեքիաթի ամենավախենալու հատվածը:

---

---

---

---

---

4. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ իսկամ դ:

Քա...ցր, դժբա...տ, ծիծա..., գլու..., մե...ու, տ...ուր, ծա...ել, տե...ավորել, վա...եցնել,  
փա...նել:

**5. Բառարանի օգնությամբ գտիր տրված բառերի հոմանիշ (նույն իմաստ) բառերը:**

Ելարան – \_\_\_\_\_

Ծիծաղ – \_\_\_\_\_

Ազահ – \_\_\_\_\_

Հզոր – \_\_\_\_\_

Սարսափելի – \_\_\_\_\_

**6. Բառերն այնպես դասավորի՛ր, որ նախադասություններ ստանաս: Ժամանակ, կովի, Մի, գերի, անգամ, ընկա:**

---

Կորած, ահագին, վրա, մեղվի, երկու, են հարձակվել, արջ:

---

շարտեցի, ազահ, Կացինս, դեպի, գազանները:

**7. Քրի՛ր մեկ բառով: Օրինակ՝ ման գալ - զբոսնել**

Պար գալ – \_\_\_\_\_

Խաղ անել – \_\_\_\_\_

Բաց անել – \_\_\_\_\_

Կռիվ տալ – \_\_\_\_\_

Վախ զգալ – \_\_\_\_\_

Վազ տալ – \_\_\_\_\_

Հունձ անել – \_\_\_\_\_

**8. Շարունակի՛ր:**

Սկսեցի մտածել.<< Ի՞նչ անեի: Որտեղի՞ց այնպիսի երկար ելարան գտնեի, որ լուսնին հասնեի: Դես ման եկա, դեն ման եկա, մեկ էլ հանկարծ ...

---

---

---

---

---

---

---

---

# Մեղուների մասին

*(տեղեկատվական)*

Մեղուներն ապրում են մեծ խմբերով եւ յուրաքանչյուր առանձնակ զբաղվում է որոշակի գործով: Ընտանիքի գլխավոր անդամը մայրն է, որը ոչ մի աշխատանք չի կատարում: Երբ փեթակում ծնվում է երիտասարդ մայր, ծեր մայրն իր պարսի հետ լքում է փեթակը: Ծնվելուց մի քանի օր անց մայր մեղուն սկսում է առանձնանալ իր չափով եւ գունավորմամբ ու տեղակայվում է փեթակի կենտրոնում:

Առողջ եւ ուժեղ մայրը մեղվաբնտանիքի պունն է: Առանց մոր մնացած աշխատավոր մեղունները հատուկ ձայն են արձակում կամ հավաքվում փեթակի մուտքի մոտ:

Նոր ծնված մեղունները նեկտար չեն հավաքում, նրանց կերակրում են մյուս աշխատավոր մեղունները: Տասն օր հետո նրանք նույնպես պետք է աշխատեն, հակառակ դեպքում սովից կսատկեն: Աշխատանքային օրվա ավարտին մեղունները քնում են:

Մեղունները սնվում են նեկտարով եւ ծաղկափոշով: Նրանք ունեն հոտառության ուժեղ զգացողություն, եւ ընդունակ են նեկտարի հոտն առնել նույնիսկ մեկ կիլոմետր հեռավորությունից:

Մեղուններն ունեն հատուկ պար, որի միջոցով նրանք կարողանում են մյուսներին տեղեկացնել նեկտարի հարուստ պաշարների մասին, իսկ շարժումներով կարող են հուշել նաեւ ծաղիկների հեռավորությունը փեթակներից: մեղուն օրվա մեջ կարող է նեկտար հավաքել յոթ հազար ծաղկից:

Որպեսզի 1 կգ մեղր հավաքի, մեղուն պետք է մոտ հինգ հազար անգամ դուրս գա նեկտար հավաքելու՝ «այցելելով» ավելի քան տաս հազար ծաղիկների եւ թռչելով մոտ երեք հարյուր հազար կմ տարածություն:

Մեղուն օժտված է յուրահատուկ նավիզացիոն համակարգով: Նա կարող է հեռանալ փեթակից մոտ 8 կմ, իսկ հետո հեշտությամբ գտնել վերադարձի ճամփան, չնայած նրանց սովորական աշխատանքային թռիչքը սահմանափակվում է 2 կմ շառավղով:

## **Հարցեր եւ առաջադրանքներ**

**1. Բառարանի օգնությամբ գտի՛ր անձանոթ բառերի բացատրությունը:**

---

---

---

---

---

**2. Առանձնացրո՛ւ այն տեղեկությունը, որը գիտեիր:**

---

---

---

---

---

**3. Ինչպե՞ս ենք անվանում մեղուների խմբին.**

---

4. «Փերակ» բառի տառերով նոր բառեր կազմի՛ր:

---

---

---

---

# Առաջին ճանապարհորդությունս դեպի լուսին

*Ռուդոլֆ Էրիխ Ռասպել*  
*(«Մյունխհաուզենի արկածները» գրքից)*

Բարեբախտաբար, ես հիշեցի, որ Թուրքիայում մի այնպիսի բույս կա, որը շատ արագ է աճում եւ, երբեմն, մինչև երկինք հասնում:

Դա բակլան է: Մի բույս անգամ չկորցնելով, մի այդպիսի բակլա տնկեցի, եւ բակլան իսկույն սկսեց աճել:

Աճեց, աճեց ու շուտով հասավ լուսնին:

- Ուռա՛, - գոչեցի ես եւ սկսեցի ցողունով վեր բարձրանալ: Մի ժամից հետո լուսնին հասա:

Կացինս գտնելու համար երկար ժամանակ կորցրի: Լուսինն էլ է արծաթից, կացինն էլ. արծաթը որ արծաթի վրա դնես, չի երեւա: Վերջիվերջո կացինս գտա մի կույտ փտած դարմանի մեջ:

Ուրախ-ուրախ գոտուս մեջ խրեցի եւ ուզում էի ցած իջնել:

Բայց չհաջողվեց, արեգակը չորացրել էր բակլայի ցողունը, որը կտոր-կտոր եղավ ու թափվեց: Վշտից լացս հազիվ պահեցի:

Ի՞նչ անել: Ի՞նչ անել: Մի՞թե ես էլ երկիր չեմ վերադառնա: Մի՞թե ամբողջ կյանքս պիտի անցկացնեմ այս սառած լուսնի վրա:

Օ՛, ո՛չ, ո՛չ մի դեպքում:

Վազեցի իսկույն դեպի դարմանի կույտը եւ սկսեցի նրանից պարան հյուսել: Պարանը կարճ դուրս եկավ, բայց ոչինչ: Սկսեցի պարանով ցած իջնել: Չախ ձեռքով իջնում էի, իսկ աջով կացինն էի բռնել:

Շուտով պարանը պրծավ, եւ ես օդում կախված մնացի՝ երկնքի եւ երկրի միջեւ: Սարսափելի էր, բայց գլուխս չկորցրի:

Երկար չմտածելով, ամուր բռնեցի պարանի ներքեւի ծայրը, կացնով տվի վերեւի ծայրը կտրեցի եւ կապեցի ներքեւի ծայրին: Այս բանն ինձ գետնին իջնելու հնարավորություն տվեց:

Բայց եւ այնպէս երկիրը հեռու էր, եւ շատ անգամ պետք եղավ պարանի վերեւի ծայրը կտրել եւ ներքեւի ծայրին կապել: Վերջապէս այնքան իջա, որ քաղաքի տներն ու պալատները երեւացին: Մինչեւ գետնին հասնելը երեք կամ չորս մղոն էր մնում:

Եվ հանկարծ... Օ՛ սարսափ... պարանը կտրվեց:

Ես գետնին ընկա այնպիսի ուժով, որ կես մղոն խորությամբ փոս գոյացրի:

Ուշքի գալով, երկար մտածեցի, թե այդ փոսից ինչպէս դուրս գամ: Ամբողջ օրը ոչ կերա, ոչ խմեցի, մտածում էի ու մտածում: Եվ հանկարծ ելքը գտա. եղունգներովս աստիճաններ փորեցի եւ այդ սանդուղքով գետնի երես դուրս եկա:

Օ՛, Մյունխհաուզենը երբեք չի կորչի:

## **Հարցեր եւ առաջադրանքներ**

### **1. Բառարանի օգնությամբ գտի՛ր տրված բառերի հոմանիշները:**

Ելք – \_\_\_\_\_

Աստիճան – \_\_\_\_\_

Սարսափ – \_\_\_\_\_

Եղունգ – \_\_\_\_\_

Կույտ – \_\_\_\_\_

**2. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ ք կամ կ:**

Եր...ինք, սանդուղ..., ել..., եր...իր, քաղա..., ներ...ել, արեգա..., Թուր..իա, բա...լա,  
ս...սել

**3. Լրացրո՛ւ սյունակները՝ տեքստից առանձնացնելով համապատասխան բառեր:**

Առարկա (ի՞նչ)

Գործողություն (ի՞նչ անել)

**4. Նախադասություններն առանձնացրո՛ւ վերջակետով:**

Մի բակլա տնկեցի բակլան իսկույն սկսեց աճել աճեց ու շուտով հասավ լուսնին  
ես սկսեցի ցողունով վեր բարձրանալ մի ժամից հետո լուսնին հասա:

**5. Գրի՛ր տրված բառերի հոգնակին:**

Օրինակ՝ բակլա-բակլաներ

Ցողուն – \_\_\_\_\_

Երկինք – \_\_\_\_\_

Փոս – \_\_\_\_\_

Բույս – \_\_\_\_\_

Կացին – \_\_\_\_\_

Ժամ – \_\_\_\_\_

**6. Նոր ավարտ հորինի՛ր:**

Ուշքի գալով, երկար մտածեցի, թե այդ փոսից ինչպես դուրս գամ: Ամբողջ օրը ոչ կերա, ոչ խմեցի, մտածում էի ու մտածում: Եվ հանկարծ ելքը գտա...

---

---

---

---

---

---

---

---

---

---

# Փոթորիկ

*(«Մյունխհաուզենի արկածները» գրքից)*

*Ռուդոլֆ Էրիխ Ռասսպե*

Բայց դուք մի կարծեք, խնդրեմ, որ ես միայն անտառներում ու դաշտերում եմ ճանապարհորդել: Ոչ, ես շատ անգամ լողացել եմ նաև ծովերի ու օվկիանոսների վրայով, եւ ինձ հետ այնպիսի արկածներ են պատահել, որ ոչ ոքի հետ չեն պատահել:

Մի անգամ մի մեծ նավով Հնդկաստան էինք գնում: Եղանակը հրաշալի էր: Բայց երբ մի ինչ-որ կղզու մոտ խարիսխ գցեցինք, ուժեղ փոթորիկ բարձրացավ:

Փոթորիկն այնքան ուժեղ էր, որ կղզուց մի քանի հազար (այո, մի քանի հազար) ծառ պոկեց եւ ուղիղ դեպի ամպերը վեր հանեց: Հարյուրավոր փութ կշռող հսկա ծառերն այնքան էին բարձրացել, որ գետնից նայելիս բմբլի չափ էին թվում:

Բայց հենց որ փոթորիկը վերջացավ, իսկույն արմատներ գցեց այնպես, որ կղզու վրա փոթորկից ոչ մի հետք չմնաց:

Զարմանալի ծառեր են, այդպես չէ՞: Ասենք, մի ծառ բոլորովին չվերադարձավ:

Բանը նրանումն է, որ, երբ այդ ծառը վեր թռավ, նրա ճյուղերի վրա գտնվում էր մի չքավոր գյուղացի իր կնոջ հետ: Ինչո՞ւ էին նրանք ծառը բարձրացել: Շատ պարզ՝ որ վարունգ քաղեն, որովհետեւ այդ երկրում վարունգը ծառի վրա է աճում:

Այդ կղզու բնակիչները ամեն բանից շատ վարունգն են սիրում եւ ուրիշ ոչինչ չեն ուտում. վարունգը նրանց միակ կերակուրն է:

Խեղճ գյուղացիները, փոթորկից բռնված, ստիպված էին ամպերի տակ օդային ճանապարհորդություն կատարել:

Երբ փոթորիկը հանդարտեց, ծառն սկսեց վար իջնել: Գյուղացին եւ գեղջկուհին շատ հաստ էին, նրանք իրենց ծանրությամբ ծառը ծռեցին եւ ընկան ոչ թե այնտեղ, ուր առաջ աճում էր, այլ ուրիշ տեղ՝ այդ երկրի թագավորի վրա եւ, բարեբախտաբար, ինչպէս մժեղի, տրորեց նրան:

- Բարեբախտաբար, - կհարցնէք դուք: Ինչո՞ւ բարեբախտաբար: Որովհետեւ այդ թագավորը շատ խիստ մարդ էր եւ կղզու ժողովրդին գազանի պէս տանջում էր:

Ժողովուրդը շատ ուրախացավ, որ իրենց տանջողը ոչնչացավ, եւ նրա թագն ինձ առաջարկեց:

- Խնդրում ենք, բարի Մյունխհաուզեն, մեր թագավորը եղիր:

Դու այնքա՛ն իմաստուն ես, այնքա՛ն համարձակ:

Բայց ես կտրականապէս մերժեցի, որովհետեւ վարունգ չեմ սիրում:

## Հարցեր եւ առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր անձանոթ բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

---

---

---

---

2. Առանձնացրո՛ւ ամենատրախ եւ ամենատխուր հատվածները:

---

---

---

---

---

3. Տրված համառոտ նախադասությունները ընդարձակի՛ր:

Եղանակը հրաշալի էր:

---

---

Փոթորիկ բարձրացավ:

---

---

Ժողովուրդն ուրախացավ:

---

---

4. Դուրս գրի՛ր հոգնակի բառեր եւ դարձրո՛ւ եզակի: Օրինակ՝ անտառներ-  
անտառ

---

---

---

---

---



---

---

## Արտասովոր եղջերուն

(«Մյունխհաուզենի արկածները» գրքից)

*Ռուդոլֆ Էրիխ Ռասպել*

Ասենք ինձ հետ ավելի հրաշք բաներ են պատահել:

Գնում եմ մի անգամ անտառով եւ անուշ անում ճանապարհին գնած քաղցր  
բալը:

Հանկարծ մի եղջերու դուրս եկավ: Ամրակազմ, գեղեցիկ, ճյուղավոր  
պոզերով մի եղջերու:

Իսկ ինձ մոտ՝ ոչ մի գնդակ:

Եղջերուն հանգիստ կանգնել, նայում էր ինձ. Կարծես գիտեր, որ հրացանս  
դատարկ է:

Բախտիցս մոտս մի քանի բալ էր մնացել, եւ ես հրացանս բալի կորիզով լցրի:

Այո՛, այո՛, մի ծիծաղեք: Հրացանս լցրի սովորական կորիզով:

Հրացանը թնդաց, բայց եղջերուն միայն գլուխը թափահարեց:

Կորիզը կպավ ճակատին եւ ոչ մի վնաս չտվեց: Մի վայրկյանում նա  
անհետացավ թավ անտառում: Ես շատ ավստասցի, որ այդպիսի գեղեցիկ  
կենդանուն ձեռիցս բաց թողի: Մի տարի հետո ես նորից որսի էի գնացել: Իհարկե,  
այդ ժամանակ ես բալի կորիզի պատմությունը բոլորովին մոռացել էի:

Ինչպե՛ս զարմացա, երբ անտառի խորքից ուղիղ դեմս դուրս եկավ մի  
հրաշալի եղջերու՝ պոզերի արանքին մի մեծ բալենի: Հավատացեք, որ շատ  
հրաշալի էր. ամրակազմ եղջերու՝ գլխին մի մեծ ծառ:

Իսկույն գլխի ընկա, որ այդ ծառը բուսնել է բալի այն փոքրիկ կորիզից, որով անցյալ տարի ես հրացանս լցրել եմ արձակել էի եղջերվի վրա:

Այս անգամ գնդակի պակասություն չունեի: Նշան բռնեցի, արձակեցի, եւ եղջերուն անկենդան գետնին ընկավ:

Այդպիսով, մի զարկից միանգամից ստացա եւ՝ տապակած միս, եւ՝ բալի կոմպոտ, որովհետեւ ծառը ծածկված էր խոշոր, հասուն բալերով:

Պետք է խոստովանեմ, որ այլեւս այդպիսի համեղ բալ էլ կյանքումս չեմ կերել:

## Հարցեր եւ առաջադրանքներ

1. Բառարանի օգնությամբ գտի՛ր տրված բառերի հոմանիշ (նույն իմաստ) բառերը:

Հրաշք - \_\_\_\_\_

Ճանապարհ - \_\_\_\_\_

Իսկույն - \_\_\_\_\_

Ամուր - \_\_\_\_\_

Բուսնել - \_\_\_\_\_

Խոշոր - \_\_\_\_\_

2. Առանձնացրո՛ւ եղջերվին նկարագրող նախադասությունը:

---

---



# Ութոտնուկ նապաստակը

*Ռուդոլֆ Էրիխ Ռասպել*

*(«Մյունխհաուզենի արկածները» գրքից)*

- Այո՛, Ռուսաստանում ինձ հետ հրաշք բաներ քիչ չեն պատահել:

Մի անգամ հետեւում էի մի արտասովոր նապաստակի:

Նապաստակը շատ արագավազ էր: Վազում է ու վազում, գոնե մի րոպե հանգստանա:

Երկու օր, առանց ձիուց իջնելու, վազում էի նրա հետեւից, բայց հասնել չկարողացա:

Իմ հավատարիմ շունը՝ Դիանկան, ոչ մի քայլ նապաստակից ետ չէր մնում, իսկ ես ոչ մի կերպ չկարողացա մի գնդակի տարածություն մոտենալ:

Երրորդ օրը, այնուամենայնիվ, կարողացա խփել այդ անիծված նապաստակին: Հենց որ ընկավ խոտի վրա, ես ձիուց ցած թռա եւ սկսեցի նայել:

Երեւակայեցեք իմ զարմանքը, երբ ես տեսա, որ այդ նապաստակը բացի սովորական ոտքերից, պահեստի ոտներ էլ ունի: **Նա ուներ չորս ոտք փորի վրա եւ չորս ոտք մեջքի վրա:**

Այո՛, մեջքի վրա ուներ հրաշալի ամուր ոտքեր: Երբ ներքեւի ոտքերը հոգնում էին, նա շուռ էր գալիս մեջքի վրա՝ փորը դեպի վեր եւ պահեստի ոտքերով շարունակում փախչել:

Զարմանալի չէ, որ ես երեք օր շարունակ իսելագարի նման վազում էի նրա հետեւից:

## Հարցեր եւ առաջադրանքներ

1. Բառարանի օգնությամբ գտիր տրված բառերի հականիշ (հակառակ իմաստ) բառերը:

Զարմանալի – \_\_\_\_\_

Արտասովոր – \_\_\_\_\_

Վազել – \_\_\_\_\_

Հավատարիմ – \_\_\_\_\_

Ընկնել – \_\_\_\_\_

2. Առանձնացրո՛ւ ամենազարմանալի հատվածը:

---

---

---

---

3. Ընդգծված ընդարձակ նախադասությունները համառոտի՛ր, թող միայն *n՝ի*, *ի՛նչ արեց* հարցերին պատասխանող բառերը:

---

---

---

---

#### 4. Հորինի՛ր.

«Ալարկոտ նապաստակը»

---

---

---

---

---

---

---

---

---

---

# Նապաստակ

(տեղեկատվական)

Նապաստակները նապաստականմանների կարգի կաթնասունների ընտանիքի ներկայացուցիչներ են: Հայտնի է նապաստակների մոտ 50 տեսակ: Տարածված են բուրբ գոտիների դաշտերում, թփուտներում եւ այլուր:

Մարմնի երկարությունը 50-60 սմ է, կենդանի զանգվածը՝ 4-7 կգ: Ականջները երկար են, պոչը՝ կարճ: Հետին վերջավորությունները երկար են առջեւիներից: Արագավազ է: Մնվում է բուսական կերով: Նապաստակներն ունենում են 3-6 ձագ, որոնք ծնվում են բաց աչքերով, աղվամազածածկ, շարժվելու ունակ եւ մի քանի օր անց կարողանում են ինքնուրույն սնվել: Տարվա ընթացքում նապաստակները ձագ են ունենում 2-3 անգամ:

Նապաստակի կաթը շատ սննդարար է. 6 անգամ ավելի յուղալի է, քան կովի կաթը. այնպես որ 1 անգամ կերակրվելուց հետո ձագը 3-4 օր կուշտ է լինում: Իսկ 3-4 օր անց ձագերն արդեն կարող են խոտ ուտել:

Նապաստակին հաճախ են վախկոտ անվանում: Սակայն դա այդպես չէ. արժե տեսնել, թե նա ինչպես է երկար ցատկերով, ասես գետնատարած, երկար ականջները մեջքին սեղմած առաջ նետվում եւ փախչում որսկան շներից: Ցատկելով մեկ՝ հետ, մեկ կողք՝ խառնում է հետքերը, ապա հեռանում է ու թաքնվում: Չուր չէ, որ նապաստակին «շղիկ» են ասում. նա ոչ միայն իր առջեւն ու շուրջն է տեսնում, այլեւ մի քիչ էլ՝ հետեւը: Ականջները նույնպես շրջվում են չորս կողմ, եւ գլուխը պտտելու կարիք չի լինում:

Նապաստակները տարածված են ամենուրեք, բացի Մադագասկար կղզուց, Հարավային Ամերիկայի հարավային շրջաններից եւ Անտարկտիդայից: ՀՀ-ում ամենուրեք հանդիպում է անդրկովկասյան գորշ նապաստակը:

## Հարցեր եւ առաջադրանքներ

1. Տեքստից դուրս գրի՛ր անձանոթ բառերը, բացատրի՛ր բառարանի օգնությամբ:

---

---

---

---

2. Ի՞նչ նոր տեղեկություն իմացար նապաստակի մասին:

---

---

---

---

---

3. «Նապաստակ» բառի տառերով նոր բառեր կազմի՛ր:

---

---

---

---

---

# Կես ձին

*(«Մյունիսհատուզենի արկածները» գրքից)*

*Ռուդոլֆ Էրիխ Ռասսպե*

Պատերազմում, իհարկե, իմ քաջությամբ աչքի ընկա եւ թշնամու վրա հարձակվելիս ամենից առաջ ես էի գնում:

Մի անգամ տաճիկների հետ կատաղի կռիվ ունենալուց հետո, մենք գրավեցինք թշնամու բերդը: Ես առաջինը մտա այդ բերդը եւ, դուրս քաշելով բոլոր տաճիկներին, փրփրած ձիւ քշեցի դեպի աղբյուրը՝ ջուր տալու: **Ձին ջուրը խմում էր եւ ոչ մի կերպ չէր կարողանում իր ծարավը հագեցնել:** Անցավ մի քանի ժամ, բայց ձին աղբյուրից չի կտրվում: Սա ի՞նչ հրաշք է: **Ես ապշեցի: Բայց հանկարծ իմ հետեւից ջրի արտասուվոր ձայն լսեցի:**

Ես նայեցի եւ զարմանքից քիչ մնաց, որ ձիուց ընկնեմ:

Բանից դուրս եկավ, որ ձիուս հետեւի մասը կտրված է եւ ջուրը, որ խմում էր, ազատ կերպով ետեւից թափվում է՝ փորումը չի մնում: Այդ պատճառով ետեւիս մի մեծ լիճ էր գոյացել:

Ես ապշեցի: Ինչ տարօրինակ բան է:

Բայց այդ ժամանակ զինվորներիցս մեկը մոտեցավ ինձ եւ հանելուկը պարզեց:

Երբ ես հետեւելիս եմ եղել թշնամիներին եւ բերդն եմ մտել, տաճիկները հենց այդ վայրկյանին բերդի դուռը փակել են եւ ձիուս կեսը կտրել: Կարծես կես եմ արել: Ետեւի մասը միաժամանակ մնացել է դարպասի մոտ, աքացիներով ցրել տաճիկներին, հետո վազել մոտիկ դաշտը:

-Նա այնտեղ արածում է, - հայտնեց զինվորս:

-Արածում է: Չի կարող պատահել:

-Ինքներդ տեսեք:

Ես, ձիուս առաջին կեսի վրա նստած, սլացա դեպի դաշտը: Այնտեղ ես իսկապես տեսա ձիուս երկրորդ մասը: **Նա կանաչ դաշտում հանգիստ արածում էր:**

Ուղարկեցի զինվորական բժշկի ետեւից եւ նա, երկար չմտածելով, դափնու բարակ ճյուղերով ձիուս կեսերը կարեց իրար, որովհետեւ թել չունէր:

Ձիուս կեսերը կպան իրար, իսկ դափնու ճյուղերը նրա մարմնի մեջ արմատներ արձակեցին եւ մի ամսից հետո թամբի վրա դափնու ճյուղերից մի լավ տաղավար ունեցա:

Այդ տաղավարի մեջ նստած, ես շատ զարմանալի քաջագործություններ կատարեցի:

## **Հարցեր եւ առաջադրանքներ**

1. Դու՛րս գրիր անձանոթ բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

---

---

---

---

2. Ձիու անունից համառոտ պատմի՛ր «Կես ձին»:

---

---

---

---

---

---

---

3. Ձիերի մասին 5-10 փաստ առանձնացրո՛ւ եւ որեւէ ձեռով (ռադիոնյութ, տեսանյութ, սալիկահանդես) ներկայացրո՛ւ բլոգումդ:

4. Գտի՛ր բառեր, որոնցից կարող ես գործողություն ցույց տվող բառեր ստանալ. օրինակ՝ նկար-նկարել, խոսք-խոսել:

---

---

---

---

5. Նշված ընդարձակ նախադասությունները դարձրո՛ւ համառոտ, համառոտները՝ ընդարձակ:

---

---

---

---

---

6. Տրված բառակապակցություններն գրի՛ր մեկ բառով:

Օրինակ՝ կարուձեւ անող արհեստավոր-դերձակ

Ձիերի խումբ – \_\_\_\_\_

Որս անող մարդ – \_\_\_\_\_

Բույսով կերակրվող – \_\_\_\_\_

Ձիու ձագ – \_\_\_\_\_

Հրաման տալ – \_\_\_\_\_

Կենդանիներ բուժող մարդ – \_\_\_\_\_

## Օգտագործված աղբյուրներ

- «Իմացումի հրճվանք» լաբորատորիա
- Վիքիպեդիա ազատ հանրագիտարան
- «Մյունխհաուզենի արկածն